

Արտի ցաւով պատասխանեց մէակն անդարտ ,
 Այ չարտիրտ դող աւաղակ , դուն անաշխատ
 Եւ անարդար տանիս ցորենն ՚ի քո նրկուղ ,
 Օ իս նախատես որ իմ քրտանց դոյզն պատու
 Ար խոզկեմ եւ թափած հասկեր տիրոջ կամքով
 Եւ կը տանիմ նախ իրեն քով ,
 Եւ ինձ կուտայ յոժար սրտով :

Իսկ մնաստկար քու չարութեամբ
 Կուտես տիրոջս բոլոր պարէն ,
 Եւ անպատկառ զքարարտութեամբ
 Օրկել կուգես զիս իմ փարձքէն :
 Ի՞նչ կը ջանաս իղէլ բերնիս արդար պատատ
 Իայց արդ գիտցիր որ անպատիժ չես դու իսպառ :
 Իսկ երբ լոց արտին տէրն ,
 Ժողկեց գիւղին գործաւորներ ,
 Փորեց խորունկ բոլոր արաւերն ,
 Բանդեց աւրեց մկանց տուներն .
 Եւ այնչափ շատ գտաւ ցորեն
 Որչափ ելած չէր իւր կալէն :

Եւ յայտնս մրջափ կան շատ մարդիկ չարասիրտ
 Որք լալիլիղեն զաղքատին տուն ժանեօք բիրտ
 Եւ աչք տնկեն ժիր մշակաց չոր հացին
 Եւ անմեղաց սիրտք աղօթեն նոցա դարձին :

Մ • Վ • Մարկոսեան
 Ս խորան Ս • Լ բուտաղէմի :

ԺԱՄԸՆԵԿԱՐԳՐԱԿԱՆՔ

Եւ տանայէն եկած նամակէ մը հե-
 տնէտար կը բաղեմք :

() Գոտոտ 20 տեղս (Մտանայ)
 Գանուող տաճներէք կամ տաճն եւ չորս
 տունի չափ (Նորիք յաւնադաւան դաւ-
 նալով) այն հսկայ եւ խուժան մարդիկը
 անտմոթաբար կրկին մկրտուեցան . այս
 պիտի անվայել գործոյ մը արժանաւոր
 մեղադրութեանը են թակայ են թէ
 մկրտուք եւ թէ մկրտեալք . բրիտա-
 նէութեան դէմ եղող այնօրինակ նող-
 կալի կրօնամոլութիւն մը ՚ի սկզբանէ
 ՚ի վեր անարգելի եղած է , մանաւանդ
 ապանկ դարու մը մէջ , ուր կը կարծուի

թէ բրիտանէութեան ոգին հասկցուած
 է , բայց ստորին նպատակներու ծա-
 ւայող զոր մէկը կարող է ճշմարտու-
 թեան հասու ընել :

Եւ յայտնի նողկալի մոլեռանդու-
 թեան մատին տուրք Վերքը իւր քարծը
 վճիռը տուած է , անուանելով զայն
 պիտիներն ընդհանուր իրեն ՚ի իւր հանդէ-
 ուրեմն (Յունաց քրածը կամակորու-
 թիւն եւ յամառ մոլեռանդութիւն է ,
 զոր ողջամիտ մասը կը դատապարտէ :
 () Թօտոքս անուանեալ յունաց եկե-
 ղեցին չի պիտի կրնայ այս բարոյական
 մեծ արատը իւր վերայէն սրբել , քանի
 որ շարունակելու թշրալորէ . . . :

- Իրբեցութիւնն աշխարհիս մէջ

միջամեծ զոհեր ըստ, և բազմաթիւ տուներ աւրած է, շարունակ ալ անարգութիւն և անպատուութիւն կը բերէ իւր կեղեքիչ ճիրանաց մատնուողներուն գլխոյն, ինչպէս օգոստոս 27 ին տեղացի Յոյն երիտասարդ մի գինեով գլուխը բաւական տարցուցած լինելով Յոսպէի դրան մօտ գտնուած սրճարաններէն մէկը բռնութեամբ մանկը ուզելուն և զինքն արգիլողաց սպառնալիք և հարստած տալուն համար ոտովի տնութեան մատնուեցաւ և անասնական արհամարհութեամբ սաստիկ գանակը ծուելով և ոտքերէն գետնի վրայ բաշկոտուելով բանտը դրուեցաւ ի դպաւ տուութիւն: Այս անարգ միանգամայն և ցաւալի տեսարանին խուռն բազմութիւն ներկայ էին, սակայն ցաւալի է տեսնելը որ նոյն տեղերը տակաւին ալ մեն երեկոյ արբեցողներ կը գանուին անարգ և լքեալ վիճակի մէջ:

— (Օգոստոս 30), Ռուսաց վեհապետ Վրայէր անուան տօնի տարեդարձն լինելով Յոյն միաբանութիւնը հանդիսաւոր պատարագ մատուց Ս. Յարութեան տաճարի մէջ, ուր ներկայ էր Ռուսաց Հիւպատոսը հանդերձ իւր բարտաւղարոյնն ու իրենց վանուց բոլոր պաշտօնատարիւք և մեծ բազմութեամբ, նոյն երեկոյ Հիւպատոսարանը փառաւոր ճրագավառութեան հանդէս ալ կատարեց:

— (Մայիս 3 ին) քսան տարեկան Յոյն երիտասարդ մի ծխախոտի սխառն բռնուած լինելով յանկարծակի մեռաւ. երիտասարդական անխոհմտութիւնը, այսպէս քսնի քսնի զոհեր ըստ ունի և ամեն օր կ'ընէ. բայց և ողջափ թըշուառ երիտասարդներ ստակաւին այսօր իրենց մահուան հետ կը խաղան, և իրեն գալով ու խայտալով տարածամ գէտ ի գերեզման կը վազլաղեն...

— 6 ին, Վասին կրօնաւոր մը, որ Հոռով ձեռնադրուած և 45 տարիէ ՚ի վեր Հոռովէական եկեղեցւոյն պաշտօնէնութիւն կ'ընէր, այս օրերս Յոսպէ օգափոխութեան երթալ և դառնալէն վերջը այս տեղ բողբոսականաց բով կ'իջնէ և տեղեցւոյ իրենց պատրիարքական

փախանդոլին դրով իւր հրամարտական տալով կը ծանուցանէ որ իւր անունը իրենց միաբանութեան և վարդապետաց ցանկէն դուրս հանեն:

Թէպէտ այլ և այլ պատճառներ կուտան այս կրօնափոխութեան, բայց մենք կ'ըսենք, որ բրիտանեաց մի բնաւ պատճառ չունի կրօնափոխութեան, քանի որ ինքն ալ մի և նոյն Վեհապետի աշակերան է:

— Պալլարաց խնդրոյն տուութիւ տեղոյս Յունաց միաբանութիւնը գիր դրած էր Պօլսոյ Պատրիարքարանին թէ՛ այժմէն մեր հաւանութիւն կը տանք թէ՛ մենք և թէ՛ տեղոյս ժողովուրդը Սինոդի վճռոյն որոյ մասին Պօլսոյ Պատրիարքարանը շնորհակալութե գիր դրած էր միաբանութեան. ուստի երբ լսեց միաբանութիւն թէ իրենց Պատրիարքը Պալլարները բանադրելու մասին համակարծիք չէ Պօլսոյ Պատրիարքարանին և չմասնակցելու համար գաղտնարար յարուստողէմ վերադարձած է, անմիջապէս Պօլիս կը հեռադէ թէ՛ մենք Պատրիարքը չը պիտի ընդունինք և յատուկ վարդապետներ կը զրկէ Յոսպէ, որպէս զի յետ դարձնեն Պատրիարքը: Իսկ Պօլիսէն պատասխան կ'ընդունին թէ՛ պէտք է մեծ պատուով ընդունիք: Պօլսոյ Ռուսաց Իեսարանը այս եղելութեան վրայ կ'սակածելով որ մի գուցէ Յոսպէի մէջ Պատրիարքը ընդունենալն համար ժողովրդեան և միաբանութեան մէջ յուզմունք տեղի ունենայ, որուն համար տեղոյս Ռուսաց Հիւպատոսին յատուկ հեռագիր կը բաշէ, որ Յոսպէ իջնէ և Պատրիարքը ընդունի պատուով:

Ռուսի խնդոյն Հիւպատոսը Յոսպէ իջու և ամայս 25 ին ընդունեցին Պատրիարքը, որ խնդոյն Նշուաղէմ եկաւ խուռն բազմութիւն գիշերը ժամը 4 ին և մի և նոյն միջոցին Վոլչովոյի վերայ հանդիսաւոր պատարագ մատուց Պատրիարքը և այսպէս ընդունելութիւնը վերջացաւ:

Նիկէյ կը գուշակուի, որ եթէ միաբանութիւնը ընդունէր Պատրիարքը Ռուսաց Հիւպատոսը իրենց վանքը պիտի տանէր զայն: